

# ***Երբեք ուշ չէ սովորել***

**Դասընթաց**

**Երևան, Հայաստան**

**Մայիսի 22-27, 2010**

Մայիսի 22-27 Երևանում տեղի ունեցավ Լիդիա նախագծի կողմից կազմակերպված «Երբեք ուշ չէ սովորել» դասընթացի երկրորդ հատվածը: Սա 2008թ-ին Ռումինիայի Տրանսիլվանիա քաղաքում տեղի ունեցած դասընթացի շարունակությունն էր: Ծրագիրը տարեց մարդկանց, նրանց խնդիրների և այդ խնդիրները հաղթահարելու եղանակների մասին էր:

Լիդիայի մասնակիցների մի խումբ տարեց մարդկանց հետ աշխատելու այս ծրագիրը պլանավորել էր դեռևս 2006թ-ին: Խումբը ներառում էր կանանց՝ հայկական Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն հկ-ից և Ռումինիայում Տրանսիլվանիայի ՊրոՄիսսիո ասոցիացիայից:

Երևանի սեմինարին ներկա էին Հայաստանի տարբեր մարզերից եկած մոտավորապես 20 մասնակից: ՔՀԶԿ-ի երկու կամավորներ Լատուրա Մակարյանը և Արփինե Մաժինյանը նրանց շարքում էին: Սեմինարը վարում էին Ռումինիայից, Լիտվայից և Շոտլանդիայից ժամանած դասընթացավարները, որոնց հետ մասնակիցները քննարկեցին, թե ինչպես աջակցել տարեց մարդկանց, օգնել նրանց սոցիալական գործունեությանը, ինչպես օրինակ սոցիալական կամ մասնագիտացված ակումբների, սոցիալական գործունեություն ներառող ճաշի ակումբների, ավագ դրոփ-ին կենտրոնների և ասոցիացիաների միջոցով: Ծրագիրը ներառում էր նաև այցելություններ դեպի ծերանոց, ցերեկային կենտրոն և եկեղեցի: Այս ամենից զատ մասնակիցները հնարավորություն ունեցան այցկացնել մեկ օր Երևանից դուրս:

***Արփինե Մաժինյան***